

ՄԻԽԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ
300ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ
(1700-2000)

ՄԻԽԹԱՐԵԱՆ ՀԱՅՐԵՐՈՒ ՆՊԱՍՏԸ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻՆ 1900-2000 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

(Շար. Բազմ. 1999, էջ 94-143)

ԺԹ. դարու վերջաւորութեան եւ Քսաներորդի սկզբնաւորութեան, տեղի ունեցած տեղահանութիւնները, բռնի իսլամացումներն ու կոտորածները եւ ապա ցեղասպանութիւնը Հայ ժողովուրդին, յատկապէս արեւմտեան զանգուածին, որուն հիմնականօրէն ուղղուած է Մխիթարեան Միաբանութեան առաքելութիւնը, չէր կրնար հական փոփոխութիւններ չյառաջացնել նաեւ Մխիթարեան Միաբանութեան գործընթացին մէջ, որ ԺԸ դարուն սկսած եւ ԺԹ.ին փայլուն վերելք ապրած, ո՛րքան խոստումնալից հորիզոններ պիտի բանար քսաներորդին, երբ արեւմտեան մայրաքաղաքներու զանազան համալսարաններէն շրջանաւարտ, գրականագէտ, պատմագէտ, բանասիրութեան դոկտոր վարդապետներ, սկսած էին ասպարէզ գալ Բազմավէպի էջերէն, եւ զանազան հրատարակութիւններով, նոր լոյս սփռել, հայ մշակոյթի թաքուն զանձարանէն ներս:

Անոնցմէ չորսը,

Հ. Ստեփան Սարեան, աստուածաբան եւ գիտնական.

Հ. Կարապետ Տէր-Սահակեան, գրագէտ եւ բանաստեղծ.

Հ. Պօղոս Գասպարեան, առաքեալ եւ քարոզիչ:

Հ. Թռակա Օտապաշեան, նուիրեալ դաստիարակ:

Ուրիշներ, Հ. Աւետիք Գազէզեան, Հ. Արսէն Ղազիկեան, Հ. Անտոն Զնտոյեան, Հ. Գարեգին Լազարեան, Հ. Եղուարդ Միրունեան, պիտի կրէին տեղահանութեան բոլոր դառնութիւնը, աքսորի ճամբաներուն վրայ եւ միայն ազդու միջնորդութիւններու շնորհիւ, պիտի կարենային փրկուիլ, կորսընցնելով առ յաւիտ, իրենց ձեռագիր գրական աշխատանքները (յատկապէս Հ. Ա. Ղազիկեանի ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ Բ բաժինը):

Պիտի անհետանային վերջնականապէս, Մխիթարեան կրթական կարեւոր եւ պատմական կեդրոնները՝ Քաղկեդոնի, Նիկոմիդիոյ, Մուշի, Նորաշէնի, Առինջի, Ուղունքի, Մալաթիայի, Կուտինայի, Տրապիզոնի, Թոցի, Մարտինի, Խարբերդի՝ իրենց աշակերտներով...:

Մուրատ-Ոսփայէլեան Վարժարանի, նորահաս լաւագոյն հունձքը կազմող մտաւորականները՝ Դանիէլ Վարուժան, Արիս Իսրայէլեան, Բարսեղ Շահպազ եւ Արամ Սրապեան, բարբարոսաբար պիտի զոհուէին իրենց նուազ ծանօթ բազմաթիւ դասընկերներուն հետ:

Մխիթարեան Միաբանութեան Առաքելութեան ենթահողին հութիւնը կազմող, երկու հիմնական տարրերը՝ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ եւ ՀԱՅՐԵՆԻՔԸ յանկարծական պիտի դադրէին գոյութիւն ունենալէ: 2500 վանք, եկեղեցի, ուխտատեղի պիտի կործանէին կամ հրկիզուէին, պիտի նահատակուէին աւելի քան 3200 քահանաներ եւ աստիճանաւոր եկեղեցականներ, պիտի փակուէին վարժարաններ, 1000է աւելի, պիտի կոտորուէին 100.000է աւելի դպրոցականներ եւ 4000 մտաւորականներ:

1700ին սկսուած վերածնունդի ծրագրուած, կանոնաւոր, յարաճուն վերելք ապրող աշխատանքը, յանկարծական կանգ պիտի առնէր եւ Մխիթարեան Միաբանութեան շարքերը ուռճացնող սերունդը, որ կու գար Հայրենի գաւառներէն, պապեանական տոհմիկ աւանդութիւններով սնած գերդաստաններէն, պիտի փոխարինուէր որբանոցներէն ընտրուած պատանիներով, որ տեսած էին միայն իրենց ծնողներուն եւ հարազատներուն սպանդը կամ անվերադարձ աքսորը...:

Ահաւասիկ այս պայմաններու մէջ է որ Մխիթար Սեբաստացիի յաջորդները կը թեւակոխէին Ի դարը:

Բնաւ զարմանալի պէտք չէ թուի որ համազգային նման աղէտ մը պիտի գար խանգարելու 2000ամեայ Միաբանութեան տնտեսական հաւասարակչութիւնն ալ:

Միաբանութեան իրարու յաջորդող վարչութիւնները, պիտի ստիպուէին զանազան կալուածներ ծախել, կարենալ ՆՈՐ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ բանալու համար Միլանոյի (որբանոց), Սելրի, Երուսաղէմի, Հալէպի, Աղեքսանդրիոյ, Գահիրէի, Պէյրութի, Պիքֆայայի, Պուէնոս-Այրէսի եւ Լոս Անճէլէսի մէջ օգնութեան հասնելով, տեղահանութեան հետեւանքով ստեղծուած նորաստեղծ գաղութներուն, առանց երբեք տկարացնելու եւ շեղելու Միխիթարի գծած հոգեւոր, գրական, մշակութային մեծ ծրագիրներէն, նկարագրուած մանրամասնօրէն, յօդուածիս առաջին մասին մէջ:

Քսաներորդ դարը, Միխիթարեան Միաբանութեան կեանքին մէջ, կը յատկանշուի քանի մը հիմնական կէտերով:

Ա.- Աշխարհաբար լեզուն, դար մը առաջ, երկիւղածութեամբ սկսած Հ. Ղուկաս Ինճիւնճեանի ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆՔՈՎ (1799), պիտի դառնար բոլոր Միխիթարեան հեղինակներուն ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ եւ իր կատարելութիւնը պիտի գտնէր Հ. Արսէն Ղազիկեանի բազմաթիւ հրատարակութիւններուն մէջ:

Բ.- Հնախօսական պրպտումները Հայրենի հողին եւ անցեալին, սկսուած Ինճիւնճեանէն, Սարգիսեանէն եւ Ալիշանէն, պիտի փոխարինուէին ազգագրական-ծիսական պրպտումներով, քաղուած մեր հարուստ մատենագրութենէն, յատկապէս Հ. Վարդան Հացունիի գործերով:

Գ.- Մեծ զարկ պիտի ստանային դպրոցական ամէն տեսակի դասագիրքերու մեթոտիկ, խմբական ծրագիրով եղած պատրաստութիւնները, որոնք ի դարուն մինչեւ 60ական թուականները, որդեգրուած էին, գրեթէ բոլոր երկրամասերու հայկական գաղութներէ:

Դ.- Պիտի ծնէր նոր ամսաթերթ մը -- ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔ -- որ Բազմավէպի առաջին 50 տարիներու կատարած դերը պիտի որդեգրէր, իր ժողովրդական, ընտանեկան, կրթական բնոյթով եւ ԲԱԶՄԱՎԷՊԸ պիտի վերածուէր զուտ բանասիրական-հայագիտական պաշտօնաթերթի, որուն 38ի հասնող ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ «ԲԱԶՄԱՎԷՊ» առանձնատիպ շարքը, լաւագոյն փաստն է Բազմավէպի որակային այս ուստումին:

Հիմնականորէն պահելով հանդերձ Ա. մասին մէջ ընդ-
գծած ենթաբաժանումներս, հարկ պիտի ըլլայ աննշան փոփո-
խութիւններ կատարել, քանի Քսաներորդ դարուն կարգ մը
պայմաններ իրագործուած կամ բարեփոխութիւններու են-
թարկուած էին:

Ա. ԼԵԶՈՒԱԿԱՆ ՄԱԲՐՈՒԹԻՒՆ-ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Եթէ Հ. Արսէն Այտընեանի (1824-1902) ՔՆՆԱԿԱՆ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ կը հանդիսանայ աշխարհաբարի ամէնէն
կատարեալ ուսումնասիրութիւնը, գրական հայերէնը կը հա-
րըստանայ բազմաթիւ նորակերտ բառերով եւ գիտարուես-
տական բոլոր արդիական բառամթերքը, ծնած Ի. դարու
ճարտարարուեստին հետեւանքով, կը գտուին Մխիթարեան
հայերու հայագիտական տարրալուծարանին մէջ եւ ամենայն
դիւրութեամբ, կը վերածուին ընտիր հայերէնի, չնորհիւ ետե-
ւէ-ետեւ լոյս տեսնող զանազան դասագիրքերու եւ բառգիրք-
ներու, Ս. Ղազարի տպարանէն: Այսպէս, օրինակի համար.

1. Սկզբում Բայնական երաժշտութեան (Հ. Մինաս Նու-
րիխան, 1854-1929)

2. Գործնական քերականութիւն իտալերէն լեզուի (Հ. Յու-
սիկ Մեհրապեան, 1853-1914)

3. Թուարանութիւն-Երկրարանութիւն (Հ. Համազասպ Սա-
փարեան, 1853-1919)

4. Տարերբ աշխարհագրութեան - Առձեռն բառարան հայ-
գաղղիերէն (Հ. Դամիէլ Ստեփանեան, 1856-1931):

5. Հանրագիտութիւն - Վարժութիւն Գաղղիերէն լեզուի (Հ.
Ա. Տիրոյեան, 1857-1926)

6. Ուղղագրութիւն ազգային մատենագրաց - Ս. Մեսրոպ եւ
Հայաստանի ոսկեդարը - քրիստոնէական քարտարապետութիւն
- Վենետիկ Մխիթարեան Յանձնաժողովին կարծիքը Հայերէն
ուղղագրութեան մասին (Հ. Գաբրիէլ Նախապետեան, 1857-1939)

7. Պատմութիւն Ս. Գրոց - Սրբազան պատմ. համառօտ -
Բառարան Հայ-Գաղղիերէն (Հ. Գեորգ Պայեան, 1860-1939)

8. Պատմութիւն Ս. Գրոց - Բառգիրք գրպանի գաղղ. - Հայ-
Գաղղիերէն - Ա. Գիրք ընթերցման տղայոց - Այգեստան -
Քրիստոնէական վարդապետութիւն Պիոսի... (Հ. Ամանիա Գոմ-
տաբեան, 1857-1925)

9. Արջառաքանութիւն: Բնական եւ քնարանական գիտութիւնք - Ճագարարութիւն-Հաւարութիւն (Հ. Յակոբ Տիրոյեան, 1857-1933)

10. Իրագիտութիւն - Նոր տարրաքանութիւն - Տարերք կենդանաքանութեան (Հ. Պողոս Գափքամնեան)

11. Նախադրութիւն Հայ-Գրաքար Բերականութեան - Քերականութիւն գործնական արդի հայերէնի - Քերականութիւն հին հայերէնի, Առաջին քալ (Հ. Թադէոս Թովմանեան, 1864-1948)

12. Էակներու ծագումը (Հ. Ստեփան Սարեան, 1865-1915) Նահատակ

13. Պատմութիւն արեւելեան հին ազգաց եւ յունաց (Գերգ. Ներսէս Ճնտոյեան, 1865-1936)

14. Միջին ընթացք իմաստասիրութեան (Հ. Նդուարդ Միրումեան, 1865-1937)

15. Ուղղագրութիւն եւ առոգանութիւն հայերէնի - Երևանեան ուղղագրութեան դէմ - Վենետիկի Միխրարեան Յանձնաճառովին կարծիքը հայերէն ուղղագրութեան մասին (Հ. Վարդան Հացունի, 1870-1944)

16. Մարդակագմութիւն - Տարերք կենդանաքանութեան եւ մարդակագմութեան - Տարերք հանքաքանութեան (Հ. Միսն Նրեմեան, 1871-1938)

17. Հայ լեզուի ուղղագրական դասեր - Մի գրէք այլ գրեցէք - Վենետիկի Միխրարեան Յանձնաճառովին կարծիքը հայերէն ուղղագրութեան մասին (Հ. Արսէն Ղազիկեան, 1870-1932)

18. Բնաշխարհիկ քառարան (Հ. Սուբիաս Էփրիկեան, 1873-1950)

19. Պատմութիւն Հռոմայեցւոց - Պատմութիւն Հայոց - Հին պատմութիւն Արեւելի - Հին պատմութիւն. Հռոմ (Հ. Սահակ Տէր Մովսէսեան, 1878-1950)

20. Գրագիտութիւն - Քերականութիւն իտալերէն լեզուի (Հ. Ալեքսիս Յովսէփեան, 1878-1952)

21. Պատմութիւն Հայոց (Հ. Յարութիւն Աստուրեան, 1880-1949)

22. Պատմութիւն Հայ հին գրականութեան (Հ. Կիւրեղ Քիպարեան, 1891-1979)

23. Աշխարհագրութիւն Ա.-Բ.-Գ տարի (Հ. Մանուէլ Թաշմեան, 1889-1977)

24. Այրբեմարան եւ գրի դասեր (Հ. Գեորգ Ռսկեան, 1894-1949)

25. Պատմութիւն Հայոց Ա-Բ-Գ-Դ-Ե-Զ հատոր (Հ. Վահան Յովհաննէսեան, 1894-1977)

26. Ընդարձակ քառգիրք Հայերէնէ հայերէն: (Հ. Պետրոս Ճիգմէնեան 1904-1982)

27. Պատմութիւն արդի հայ գրականութեան - Ծաղկաբաղ արդի հայ գրականութեան - Հայ գրականութեան նոր շրջանի համառօտ պատմութիւն (Հ. Մեսրոպ Ճամաշեան, 1910-1974)

28. Նոր Սեւան ընթերցարան Ա-Բ-Գ-Դ-Ե հատոր (Հ. Յակոբ Զանթայեան, 1910-1980)

29. Կրօնքի դասեր Ա-Զ հատոր (Հ. Աւետիք Թալաթիեան, 1912-1993)

30. Բառգիրք Հայ-Իտալերէն (Հ. Նիկողոս Քեհեայեան, 1920-1986)

31. Բառգիրք Փրանսերէն-հայերէն (Հ. Եփրեմ Տէր Ղազարեան, 1920-1993)

32. Իմ նախնիքներուս պատմութիւնը (Հ. Կամիտաս Մանուկեան, 1921-1997)

33. Իմ առաջին քառգիրքս (Հ. Գեորգ Պալեան)

34. Բառգիրք Հայերէն Իտալերէն եւ Իտալ-հայերէն (Հ. Վահան Օհանեան)

Բ. ՊԱՄՄԱԳՐՈՒԹԻՒՆ-ՀՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Այս ենթախորագիրը ԺԸ եւ ԺԹ դարերու համար որդեգրուած, քսաներորդին աւելի գրական աշխատանքներու, պատմական, բանասիրական ուսումնասիրութիւններու պիտի յատկացնեմ, քանի անհնարին դարձած ըլլալով տեղոյն հայ հնախօսական պրպտումներ կատարելը, Մխիթարեան հայրերը, զարկ տուին բանասիրական պրպտումներով, քաղուած միջնադարեան հարուստ մատենագրութենէն, ուսումնասիրել հայ մշակոյթի զանազան երեսները: Այս մարզին մէջ մասնաշատուկ տեղ կը գրաւեն Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻԻ աշխատասիրութիւնները, որոնք մինչեւ այսօր հիմք կը ծառայեն ազգագրական ուսումնասիրութիւն կատարող որեւէ լուրջ գիտնականի: Յիշենք գլխաւորները:

1. Դաստիարակութիւնը հին հայոց բով
2. Երդմունք հին հայոց մէջ
3. Հայ դրօշներ
4. Ճաշեր եւ խննոյ՛ հին Հայաստանի մէջ
5. Պատմութիւն հին հայ տարագին
6. Հայուհին պատմութեան առջեւ
7. Պատմութիւն հայոց աղօթամատոյցին
8. Կաթողիկոսական ընտրութիւնն ու ձեռնադրութիւնը պատմութեան մէջ
9. Պատարագամատոյց
10. Հայ Եկեղեցւոյ պատարագի օրերն ու տեսակները
11. Նորակերտ Հայ լուսինեաններ
12. Կարելոր խնդիրներ Հայ եկեղեցւոյ պատմութեան
13. Խորհրդածութիւնք Եղիշէի պատմութեան վրայ
14. Յայտնութիւն նշխարաց Եր. Տէր Կովիտասայ
15. Մովսէս Խորենացի կը դառնայ Ե. դար
16. Այվազեան Յովհաննէս ծովանկարիչ
- Հ. Մինաս Նուրիխան. - Սկզբունք ճայնական երաժշտութեան - Պատմութիւն ժամանակակից - Ժամանակակից ֆաղափական դիպաց
- Հ. Համազասպ Սափարեան. Սինֆերոպոլի Հայ կաթ. եկեղեցւոյ համառօտ տեղեկութիւն
- Հ. Բարսեղ Սարգիսեան. - 1. Երեք քազաւոր մոգերու գրոյցը
2. Ուսումնասիրութիւն հին կտակարանի
3. Վիճակագրական տեսութիւն մը
4. Ազգաբանութիւն Ալլահվերտեան տոհմին
5. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանի
- Միփթարեանց ի վեցետիկ
6. Տեսութիւն Սեղրեստրոսի պատմութեան եւ Մովսէս Խորենացւոյ աղբերաց
7. Քննադատութիւնք Յովհան Մանդակունւոյ եւ իւր երկասիրութեանց
8. Անանիա քարգմանիչ
- Հ. Գաբրիէլ Նաեապետեան. - 1. Ս. Մեսրոպ եւ Հայաստանի ոսկեդարը
2. Քրիստոնէական քարտարապետութիւն
- Հ. Գեորգ Պայեան. - Առաժ՛ հայկական - Léon le Magnifique

- Հ. **Յովհաննէս Թորոսեան**. - 1. Ընտիր Հայկազունք
 2. Քանի մը բանախօսութիւնք
 3. Հետազօտութիւնք հայ դիցարանութեան
 4. Փաւստոս Բիւզանդ կամ հայ Եկեղեցւոյ սկզբնաւորութիւն
- Հ. **Անանիա Գոնտաբեան**. - Պատմութիւն Ա. Գրոց
 Հ. **Յակոբ Տիրոյեան**. - Ուսումնական հաւաքածոյք
 Հ. **Ներսէս Ճնտոյեան**. - Ժամանակագրութիւն առձեռն
 Հ. **Կարապետ Ագրոյեան**. - Կենսագրութիւն երեսելի արանց
 Հ. **Եփրեմ Աքրահամեան**. - Նոր ուղեւորութիւն ի Կովկաս
 - Հայք
- Հ. **Եսայի Տայեցի**. - Յուշագիր կենաց եւ գործունէութեան
 նախկին կայսերական լուսանկարիչ Գ. Ապտուլլաիի
 Հ. **Միւռն Երեմեան**. - Կոստանդինուպոլիս
 Հ. **Արսէն Ղազիկեան**. - Հայկական հին մատենագրութիւն
 Հ. **Սուբիաս Էփրիկեան**. - Էջմիածին
 Հ. **Ներսէս Տիրացոյեան (1875-1943)** - 1. Ուսումնական ուղեգնացութիւն մը Բատուայէ յԱկորտինոյ
 2. Արդի դարու կեանքէ
 3. Հայկական ֆլօրա
 Հ. **Ներսէս Անդրիկեան**. - Բիւզանդիոնի Մամիկոնեանները
 Հ. **Կարապետ Տէր Ստեպեան**. - Հայ կայսերք Բիւզանդիոնի
 (2 հատոր)
- Հ. **Յարութիւն Աստուրեան**. - Քաղաքական վերաբերութիւններ ընդմէջ Հայաստանի եւ Հռոմայ
 Հ. **Մկրտիչ Պատուրեան**. - Հայ մամուլը 15 տարուայ մէջ (1894-1909)
 2. Զարդանկարք Աւետարանին Մլխէ Թագուհւոյ
 Հ. **Ղեւոնդ Տայեան**. - 1. Եղիշէի չորս յեղանակները հնագոյն գրչագրի մը մէջ
 2. Երանելի Տէր Կովիտաս Բախանայի մարմնոյն հարցը
 3. Կովիտաս վարդապետ
 4. Միսիթար Աքրահայր երածիշտ
 5. Շարական Հայաստանեայց Եկեղեցւոյ (Մեր բոլոր շարականները արեւմտեան նոթագրութեամբ 8 հատորներու մէջ)
 Հ. **Լեւոն Աքնեան (1888-1918)**. - Ղ. Փարպեցւոյ յառաջաբանին նոր ըմբերցում մը
 Հ. **Գրիգոր Սարգիսեան (1896-1964)**. - Յուցակ հայերէն ձեռագրաց Միսիթարեանց ի վեներտիկ

- Հ. **Կարապետ Ամատունի (1900-1984)**. - 1. Հայ կաթողիկոսական աթոռին ինքնավարութիւնը
 2. Ոսկան վարդապետ Երեսանցի եւ իր ժամանակը
 3. Ժէ դարու երեսելի վարդապետներ
 Հ. **Հմայեակ Կէտիկեան (1905-1999)**. - Կանոնագիրք Հայաստանեայց Եկեղեցւոյ
 1. Առաքելական կանոնք
 2. Գուշակ օրոց (Օրացոյց-տօնացոյց)
 Հ. **Մեսրոպ Ճանաչեան**. - Հ. Արսէն Ղազիկեան եւ իր քարգմանութիւնները
 2. Ս. Ներսէս Շնորհալիի շարականները
 3. Սայաք-Նովա
 Հ. **Միքայէ Յովհաննէսեան**. - 1. Հայաստանի Բերդերը
 2. Հայկական կիլիկիոյ քերդերն ու քերդաբաղաճները
 Հ. **Ներսէս Տէր Ներսէսեան**. Մեր՝ Նախնեաց հաւատքը: Ս. պատարագ վասն մնջեցելոց
 Հ. **Պօղոս Անանեան (1922-1998)**.
 1. Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները
 2. Եւտիֆիոս Կ. Պ. Պատրիարքին կարծուած եւ անտիպ մէկ գրութիւնը
 3. Սերէնոսի պատմութեան գրքին մասին քանի մը լուսաբանութիւններ
 4. Քրիստոնէութեան հետքեր Հայաստանի մէջ Ս. Գրիգոր Լուսաւորչի քարոզութեանէն առաջ
 5. Դաւիթ Տարօնացի քարգման Ս. Բարսեղ հայրապետի «Ի Ծնունդ փրկչին» ճառին
 Հ. **Յարութիւն Պզտիկեան** - 1. Ճամբորդական-հնախօսական նոթեր կիլիկիայէն
 2. Ճամբորդական-հնախօսական նոթեր պատմական Հայաստանէն
 3. Հայ ժողովուրդի ազատագրութեան պայքարը (1895-1918)
 4. Ցեղասպանութեան 70ամեակին առիթով դիւանային նիւթեր եւ գրութիւններ (ՀԱՅ Ընտանիք Բացառիկ 1985)
 5. Բռնի իսլամացած հայեր (ԺԶ-Ի դարերու ընթացքին)
 6. Հալէպահայ բրնձիկներ (ազգագրական պատկերներ)
 7. Հայաստանեան պատկերներ (հնախօսական եւ առօրեայ կեանքի նոթեր)
 8. Միջիթաբեան Հայրերու նպաստը Հայ Մշակոյթին

9. Օսմանեան Թուրքիոյ հարստահարութիւնները հայ հպատակներուն վրայ

Հ. Սահակ Ճեմհեմեան (1939-1997) .

1. Մարսիլիոյ հայկական տպարանը
2. Հ. Ղ. Ալիշան Տեսուչ Փարիզի Մ. Վարժարանի
3. Մխիթար Արքայապետի հրատարակչական առաքելութիւնը
4. Հ. Միքայէլ Չամչեան եւ իր Հայոց Պատմութիւնը
5. Նոր նիւթեր Սարգիս Արք. Սարաֆեանի մասին
6. Հայ տպագրութիւնը եւ Հոռոմ
7. Մայր Յուցակ հայերէն ձեռագրաց. Դ-Ե-Զ-Է-Ը հատոր-

ներ

Հ. Տաճատ Եարտըմեան. - 1. Քեսունի կարմիր վանքը

2. Նիւթեր հայ վանական պատմութեան

3. Ս. Ղազար կղզի մայրավանք Մխիթարեաններու

4. Որդան կարմիր կամ հայկական կարմիր ներկ

Գ. ԿՐՕՆԱԿԱՆ-ԲԱՐՈՅԱԽՕՍԱԿԱՆ-ՄԻՍԱԿԱՆ

ԺԸ եւ ԺԹ դարերուն կատարուած Հիմնական եւ կոթողային աշխատանքներէն վերջ, սկսած Մխիթար Աբբայէն, Հասնելով Չամչեանի, Աւետիքեանի եւ մանաւանդ Աւգերեանի, բոլորն ալ, սակաւ բացառութեամբ, կատարուած գրաբարով, Քսաներորդ դարու Մխիթարեաններուն կը մնար ժողովրդամերձ հրատարակութիւններով Հանդէս դալ, աշխարհաբար եւ դիւրամատչելի, որպէս հոգեւոր սնունդ ցեղասպանութենէն վերապրած սերունդին: Այս ուղղութեամբ շուրջ 100 հատորներ լոյս կը տեսնեն Ս. Ղազարի տպարանէն, մեծ մասը ինքնագիր, մաս մըն ալ թարգմանածոյ, որոնք կ'ընդգրկեն 1900-2000 թուականը:

Ամէնէն կարեւորը եւ գիտական պատրաստութեամբ լոյս տեսածը, կարելի է Գերպ. Սրապիոն Ուլուհոճեան Աբբազօր եւ Հ. Ներսէս Տէր Ներսէսեանի խնամքով պատրաստուած ԶՈՐՍ ԱԻՆՏԱՐԱՆՆԵՐՈՒՆ աշխարհաբարով թարգմանութիւնը համարիլ:

Ի դարուն լոյս տեսած կրօնական, դաստիարակչական, բարեպաշտական միւս գործերն են:

Աղօթագիրք կարճագոտ (1911), Հ. Մկրտիչ Աւգերեան.

Աղօթագիրք նոր (1932), Հ Ղուկաս Ինքնիմեան.

Աղօթք Արեղայի (1929), Հ. Ղեւոնդ Ալիշան.

Բանալի Քաւարանի (1931).

Բուրվառ աղօթից (1955).

Փոքրիկ Առաջնորդը (1925), Հ. Թեղոր Սիրունեան.

Փոքրիկ Հաղորդաւերը (1957), Հ. Յակոբ Զանթայեան.

Ամենագեղեցիկ գիրքը կամ խաչելութիւնը (1908), Բրգմ. Հ.

Ա. Յովսէփեան.

Անթոնիէթթա Մեօ (1950), Բրգմ. Հ. Բ. Զրաբեան.

Ա. Շրջաբերական բուլթ Յովհ. ԻԳ Բահանայապետին (1959), Բրգմ. Հ. Ն. Տ. Ն.

Աստուածամայրն ի Լուրս (1900).

Աստուածային Բարեկամը (1950), Բրգմ. Հ. Բ. Զրաբեան.

Զրօսարան Մայիսի կամ Ա. Կուսին (1924), Բրգմ. Հ. Աթ.

Տիրոյեան.

Խոստովանանքը դիւրացած (1916), Բրգմ. Հ. Ա. Գոնտաբեան.

Համառօտ կենսագրութիւն Մխիթար Արքաեօր (1967), Հ.

Մանուէլ Թաշնեան.

Համառօտ վարք ծառային Աստուծոյ Մխիթարայ (1914), Հ.

Յարութիւն Աւգերեան.

Հուր սիրոյն Գրիստոսի (1931), Բրգմ. Գերայ. Եղ. Հիւր-միւզ.

Հանսպարի (1970), Պալակեր, Բրգմ. Հ. Ներսէս Տէր Ներսէսեան.

Միջագային պահակախումբը, Բրգմ. Հ. Բ. Զրաբեան.

Միջնորդ Աստուծոյ (1962) Պիոս ԺԲ, Բրգմ. Հ. Ղուկաս

Յովդեան.

Յիսուսի առակները եւ հրաշքները (1955), Հ. Մանուէլ Թաշնեան.

Յիսուսի վարքը (1954), Հ. Մանուէլ Թաշնեան.

Յիսուս Գրիստոս երէկ եւ այսօր (1915), Բրգմ. Հ. Ա. Գոնտաբեան.

Յորդոր - Պիոս ԺԲ Բահանայապետ (1951).

Նոր Գանձ (1928), Բրգմ. Ս. Տէր Արքաեօրեան.

Շրջաբերական բուլթ Պիոս ԺԲ-ի կիւրեղ Երուսաղեմացիի մահուան ժՆ դարադարձի (1945).

Պաշտօն փառաբանութեան Ա. Աստուածածնի (1910), Գերայ. Իգնատիոս Փափագեան.

Ս. Կոյսն հին եւ նոր կտակարանաց մէջ (1905), թրգմ. Հ. Դ. Նազարէթեան.

Սրբազան հայկազունք կամ դէմքեր ազգային սրբազան պատմութեանէն (1901), Հ. Մ. Պոտուրեան.

Սրբակեաց Մանուկներ (1949), թրգմ. Հ. Վահան Յովհաննէսեան.

Վարք Միսիթարայ Արքայի Սերաստացւոյ (1933), Հ. Յովհաննէս Թորոսեան.

Վարք Ս. Ալեքսիանոսի (1930).

Վարք Ս. Ալոզիոսի (1932), Հ. Ղ. Ալիշան.

Վարք Ս. Ստանիսլաւոս Գոցգայի (1909), թրգմ. Հ. Ալեքսիս Յովսէփեան.

Վարք սրբոց եւ կուսանաց (1900).

Տիրամայրը (1954), թրգմ. Հ. Գ. Զրաքեան.

Գանի մը բանախօսութիւն քահանայութեան եւ Ս. Հաղորդութեան վրայ (1932), թրգմ. Հ. Յ. Թորոսեան.

Ջառանցանք աստուածային սիրոյ (1901), թրգմ. Հ. Ղ. Ալիշան.

Ի վշտակրութիւն Տիրամօր (1940), Հ. Գաբրիէլ Աւետիքեան.

Լուսանորոգն Միսիթար (1926), Հ. Մատթէոս Եւդոկիացի.

Կանոն Ս. Հօրն Բենեդիկտոսի (1928), թրգմ. Հ. Արսէն

Ղազիկեան.

Հատք ի բանից եւ ի գրոց Միսիթար Արքայի (1900), Հ.

Ղեւոնդ Ալիշան.

Ճառք հոգեւորք վասն միանձանց, Բ մաս (1927), Հ. Ղ.

Ալիշան.

Մտածութիւնք ի վերայ բանից Փրկչին (1969), Միսիթար Արքայ.

Մրմունջք շնորհակալեաց առ Ս. Կոյսն (1910), Հ. Դ. Նազարէթեան.

Ներբողեան ի լուսանորոգն Միսիթար Արքայ (1927), Հ. Մ. Եւդոկիացի.

Յովհաննէսեան (1926), Հ. Ղեւոնդ Ալիշան.

Աւետարան աշխարհաբարի վերածուած (1960) Գերպ. Սրբային Ուրուռեան.

Սաղմոս Դաւթի (1903).

Ատեան Ժամագիրք (1904).

Ժամագիրք - Շարակնոց (1937).

Ժամագիրք Առձեռն (1934, 1971).

Խորհրդատետր Ս. պատարագի (1971).

Շարական ատեանի (1907), **Գերպ. Կիրեղեան.**

Պատարագամատոյց (1936), **Հ. Վարդան Հացունի.**

Շարական Հայաստանեայց Եկեղեցւոյ. հատոր Բ,Գ,Դ,Ե,Զ,
Է,Ը, **Հ. Ղ. Տայեան.**

Քրիստոնէական Վարդապետութիւն, **Հ. Գեորգ Ոսկեան:**

Ամուսնութիւն եւ Ընտանիք, բրգմ. **Հ. Սամուէլ Արամեան:**

Ս. Թերեզա Յիսուս Մանկան, բրգմ. **Հ. Սամուէլ Արամեան:**

Կանոնագիրք Հայաստանեայց Եկեղեցւոյ, **Հ. Հմայեակ Կե-
տիկեան.**

Ինչպէ՞ս էր Քրիստոսի դէմքը, բրգմ. **Հ. Խորէն Տիլիգեան.**

Միսիթար Սեբաստացի, **Հ. Խորէն Տիլիգեան.**

Նկարագրի տեր երիտասարդը, բրգմ. **Հ. Անդրէաս Ֆո-
կոյեան:**

Քրիստոսի չարչարանքն ու մահը արդի բժշկական լոյսով,
Հ. Ա. Ֆոկոյեան.

Դէպի աղբիւրը լոյսին, **Հ. Եփրեմ Տեր-Ղազարեան.**

Ես եմ լոյս աշխարհի, **Հ. Եփրեմ Տեր-Ղազարեան.**

3000 իմաստուն խօսքեր, **Հ. Եփրեմ Տեր-Ղազարեան.**

Փրկչին Մայրը, Յովի. Պողոս Բ, բրգմ. **Հ. Պողոս Անանեան.**

Մայիսը Աստուածամօր հետ, **Հ. Արիստակէս Մանուկեան.**

Աւետարանը ապրուած կեանքով, բրգմ. **Հ. Սահակ Ճեմ-
նեանեան.**

Աւետարանական իմաստութիւն, բրգմ. **Հ. Սահակ Ճեմ-
նեանեան.**

Համամիութենական տրամախօսութիւն մը ժԲ դարուն, **Հ.
Լեւոն Զէֆիեան.**

Վաւերաբնութիւն վատիկանեան Բ տիեզերական ժողովին:

Հ. Լեւոն Զէֆիեան.

Միսիթար Լուսանորոգ եւ Ռահվիրայ, **Հ. Լեւոն Զէֆիեան.**

Հ. Աւետիք Թալաթիեան (1912-1993).

Համառօտ աղօթագիրք

Մաքուր երիտասարդութիւն

Ծաղիկի պէս հմայիչ

Կրօնքի դասեր Ա,Բ,Գ,Դ,Ե,Զ հատոր

Հոփսիսիմեան կոյսեր

Ուխտաւորին բարեկամը

Լուրտի տեսանողուհին

- Տիրամայրը կ'անցնի
 Տիրամօր երեք հովիւները
 Լուսաւորիչ Հայաստանի
 Մխիթար Սեբաստացի
 Ս. Թերեզա աւիլացի
 Տօմէնիֆօ Սաւիօ
 Ս. Թերեզա Յիսուս-Մանկան
 Ասսիզիի Ֆրանչեսկոն
 Սանթա Գիարա - Սրբուհի Պայծառ
 Ս. Յովհաննէս Պոսոյ
 Փատրէ Փիօ
 Սրբուհի Մարիամ Կորէթթի
- Հ. Եղիշէ Ճուլեան (թարգմանաբար ամփոփումներ)
 Մէր եւ Բարեկամութիւն
 Դէպի երիտասարդութիւն
 Ծնողք, Մէր, Զաւակ
 Կեանքի մայրամուտը
 Սիրելու դժուարին արուեստը
 Քրիստոս արեգակն Արեւելքի
 Կոյսը
 Պատանիներու հաւատքը
 Աստուածամայրը
 Կը փափաքիմ Վարդապետ ըլլալ

Դ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՆԱԽՆԵԱՑ ԳՈՐԾԵՐՈՒ

Հակառակ 20րդ դարու հայութեան կրած ցնցումներուն, հակառակ այն դաժան պայմաններուն ուր գտնուեցաւ Մխիթարեան Միաբանութիւնն ալ, եղան մեծ թիւով միաբաններ, որոնք համբերատար աշխատանքով, օգտուելով նաեւ Ս. Ղազարի ձեռագրատան հետզհետէ հարստացող պաշարէն, նուիրուեցան կարեւոր ձեռագիրներու ուսումնասիրութեան եւ անոնց հրատարակութեան, ծանօթացնելու համար հայ հին եւ միջնադարեան գրականութեան գանձերը գիտական աշխարհին:

Շուրջ երեսուցից ընթացքին հատոր լոյս կը տեսնեն 20րդ դարու ընթացքին:

1. Հ. Բարսեղ Մարգսեան.
 1. Անանուն ժամանակագրութիւն
 2. Եղիշէի եւ Ջաֆարիա կաթողիկոսի ի թաղումն Գրիստոսի
 3. Եւագր Պոնտացոյ մատենագրութիւնմ
 4. Վարդան վարդապետի Անեցոյ մատենագրութիւնմ
 5. Վկայարանութիւն Ս. Յովսէփայ
2. Հ. Աթանաս Տիրոյեան.
 1. Գեորգայ Պիսիդէսի վեցօրեայք
 2. Յովհաննու Ռսկերերանի ներքողեան ի Ս. Գրիգոր Լուսաւորիչ
 3. Յովհաննու Ռսկերերանի Մեկնո՞թիւն Եսայեայ
 4. Նեմեսիոս փիլիսոփայի Յաղագս բնութեան մարդոյ
 5. Շարականք եւ երգք ի պատիւ Ս. Աստուածածնի
 6. Ջուանշէրի Պատմութիւն Վրաց
 7. Բերթուածք Ղունկիանոսի երգչի կարմնեցոյ
3. Հ. Յովհաննէս Թորոսեան.
 1. Աթեղահայ Եպիսկոպոսի Ռոհայի թուղթ առ քրիստոնեայս
4. Հ. Եփրեմ Աքրահամեան.
 1. Աղօթաւատոյց Յովհաննու Գառնեցոյ
5. Հ. Եսայի Տայեցի (1868-1927).
 1. Ճառք Ս. Աթանասի
 2. Անկանոն գիրք մոր կտակարանաց
6. Հ. Գեորգե Զրաբեան (1877-1970).
 1. Անկանոն Գիրք Առաքելականք
 2. Գրիգորիսի Արշարունոյ Մեկնութիւն ընթերցուածոց
 3. Իսիճոսի Մեկնութիւն Յորայ
 4. Նանայի Ասորոյ Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին
7. Հ. Մկրտիչ Պոտուրեան (1881-1959).
 1. Առաքել Սիւնեցի եւ իր քերթուածները
 2. Կոստանդին Երզնկացոյ քերթուածք

8. Հ. Ղեւոնդ Տայեան (1884-1968).
1. Մայր դիւան Մխիթարեանց վեցետկոյ
9. Հ. Վահան Յովհաննէսեան.
Եւսերէոս Եմեսացի
10. Հ. Գրիգոր Սարգիսեան.
1. Ղազար Փարպեցի
2. Մխիթար Գոշի Խրատմ ոգեշահմ
3. Ս. Եփրեմի խորին Ասորոյ Կցորդմ
4. Տեսիլ Ս. Սահակայ Պարթեւի
11. Հ. Սամուէլ Արամեան (1900-1980).
1. Պատմութիւն Ղափանցոց
12. Հ. Մեսրոպ Ճանաչեան.
1. Դաւիթ Կիրապաղատ
13. Հ. Խորեն Տիլիգեան (1911-1988).
1. Յակոբ Խրիմեցոյ յաղագս ազգականութեանց բաժանման
14. Հ. Սերոբէ Ազըլեան (1910-1980).
1. Տարեգիրք Սմբատայ Սպարապետի
15. Հ. Ներսէս Տէր Ներսէսեան.
1. Դրախտագիրք Առաքել Սիւնեցոյ
2. Մխիթար Արքայի, Մտածութիւնմ ի վերայ բանից Փրկչին
16. Հ. Պօղոս Անանեան.
1. Վարդանայ Այգեկցոյ՝ Խրատմ
2. Վարմ Ս. Մեսրոպ Մաշտոցի
3. Դաւիթ Փիլիսոփայի երեմ գրութիւնմ
4. Զաւարիա Կաթողիկոս Զագեցի՝ Ճառմ

Ե. ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՕՏԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵՆԷՆ

ԺԹ դարուն սկսած դասական գրականութեան շարժումը որ Հիւրմիւզեանի եւ Բագրատունիի նման տիտաններու յայտ-

նազործույթեան շարժառիթ եղաւ, 20րդ դարուն կը շարունակուի որպէս շարժում, ծրագրելով արեւմտեան գրական լաւագոյն գործերը հրամցնել հայութեան, ընտիր աշխարհաբարով: Այս մարզին մէջ, Հ. Արսէն Ղազիկեան, աշխարհաբարի մեծ վարպետը, առանձին, գրադարան մը կընայ լեցնել, իր թարգմանութիւններով: Կը ջանամ կարելիին չափ ամբողջական ըլլալ:

Հ. Արսէն Ղազիկեան.

1. Տանթէի Աստուածային Կատակերգութիւն
2. Որատիոսի Արուեստ Բերքողական
3. Դաստիարակութիւն անձին (Պլէք Բոն Ստուարդ)
4. Դարբիններու գործադուլը
5. Վիրգիլիոսի Ենեական
6. Ճագօօ Լեօրարտիի Երգերը
7. Երգիծարանութիւններ եւ Բերքուածներ Գամալէի
8. Տօրգուատօ Թասսոյի Երուսաղէմ ազատեալ
9. Սոփոկլէսի Իդիպոս Թագաւոր
10. Իմ Սրտի երգը
11. Հատընտիր Բերքուածներ Քարմէն Սիլվայի (Եդիսարէթ Ռումանիոյ)
12. Ճովաննի Փափինիի Հաց եւ Գինի
13. Յրանսուա Գոթէի Հսկումը եւ Դարբիններու գործադուլը
14. Ճաշակ գաղղիերէն արդի բանաստեղծութեան
15. Կոռիոյի Ճոճնատան
16. Վիկտորիա Աղանուրի Յաւիտենական գրոյց
17. Առոիկօ Պոիթոյի Ներունը
18. Ալեսսանտրօ Մանժոնիի նշանածները
19. Վիկտորիա Աղանուրի Նոր երգերը
20. Հոմերոսի Ոդիսականը
21. Ճովաննի Փափինիի Պատմութիւն Քրիստոսին
22. Ռոլանի երգը
23. Վիպակներ
24. Ուկօ Յոսէֆոյի Տաղ Գերեզմանացը
25. Օսսիանի Բերքուածները

Հ. Յովսէփ Մարգարեան՝ կը թարգմանէ Վալերի Բրուսովի Տարեգրութիւն Հայ Ժողովուրդի պատմութեան ձակատագրին:

Հ. Աքանաս Տիրոյեան՝ Թասսոյի Ազատութիւն Երուսաղէմի եւ Տանթէի Արքայութիւնը:

Հ. Յովհաննէս Թորոսեան՝ Հանրի Պորտոյի Անթառամ Տրապիզոնիմ, Գելցերի հետագօտութիւնմ հայ դիցարանութեան, Ս. Յովհաննէս Աւիլայի Խօսք առ քահանայս, Է. Տէ Ամիչիսի Յուշք կամ յիշատակ Լոնտրայի, Մոնսարիէյի՝ քանի մը բանաստօութիւնները:

Հ. Անանիա Գոնտաֆնեան՝ կը թարգմանէ Սիէնէֆէլիչի Ջրհեղեղը, Սրով եւ Հրով, Փան Միֆայէլ Վօլոտիովսքի, Տիտոնի Յիսուս Քրիստոսը, Ռընէ Պագէնի Տոնասիէն, Հոգեմայերի Խոստովանամքը դիւրացուած:

Հ. Ալեքսիս Յովսէփեան՝ Է. Տէ Ամիչիսի Սիրտը եւ Ոստանիկ Լեգուն, Սիէնէֆէլիչի Անոր Երթամքը:

Հ. Յակոբոս Բոսպոլյըֆեան՝ (1885-1981) Ռ. Պագէնի երկիրը որ կը մեռնի, Սալկարիի 2000 մղոն Ամերիկայի ներքեւ:

Հ. Սրապիան Ուլուհոնեան՝ Փափինիի Զարչարանքի վկաները:

Հ. Գրիգոր Սարգիսեան՝ Մուսուլիմիի Վարք Առնալտիմ:

Հ. Յակոբ Զանթայեան՝ Ստիվընսընի Գանձերու կղզիմ, Պըր-նըթի Փոքրիկ Լորտը, եւ Ն. Ուայքմէնի Փափիոյան:

Հ. Անդրէաս Ֆոկոլեան՝ Հոնդարական գրականութենէն կը թարգմանէ Կեզա Կարտոնիի էկէրի Աստղերը եւ Թօթ Թի-համէրի Նկարագրի տէր երիտասարդը:

Հ. Ղուկաս Ֆոկոլեան՝ Մ. Պաշտոյի (Հոնդարացի) կը փափաքիմ մեծ ըլլալը:

Ձ. ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ինչպէս Ա մասին մէջ տեսանք, Հայ արդի թատրոնը, ծնաւ եւ զարգացաւ Ս. Ղազարի մէջ եւ Փարիզի եւ Վենետիկի Մխիթարեան վարժարաններու աշակերտներու շնորհիւ, ան-ցաւ Կ. Պոլիս:

Արդ 20րդ դարուն ալ, շուրջ 50 թատերական ինքնագիր եւ թարգմանածոյ-հետեւողական գործեր, լոյս կը տեսնեն Մխիթարեան տպարանէն, հեղինակ ունենալով, բոլոր սերունդի վարդապետներ:

Անոնցմէ մեծ մաս մը, նուիրուած է դպրոցական տարիքի պատանիներու եւ մինչեւ վերջին տասնամեակներուն, կը խաղցուէին թէ՛ Ս. Ղազարի դպրեվանքի եւ թէ՛ Մխիթարեան բոլոր վարժարաններու աշակերտներէն:

Հիմնականորէն դաստիարակչական բնոյթ կը կրեն, մաս մը զաւելչտներ են, բարեկենդանի մթնոլորտին մէջ խաղցուող, կարեւոր մաս մը, գաղութային կեանքը կը յիշեցնեն, հետեւողութեամբ Յակոբ Պարոնեանի:

Հայոց Պատմութեան ներշնչուած գործեր են՝ Հ. Միմաս Նուրիխանի Գուրգէն եւ Դերեմիկ, Թեոդոր Սալիուն, Հ. Սիմոն Երեսնամի Դարձը, Ուխտը, Սաթեմիկ, Փառանձեմ, Հ. Սահակ Տէր Մովսէսեանի Դէպի Աւարայր, Տարոսի Առիւծը, եւ Հ. Յարութիւն Պատկեանի Միսիթար Արքահայր՝ Սեբաստացին:

Միւս հեղինակներէն յիշենք.

Հ. Արիստակէս Քաւառապետ (1853-1942).

- Անճրեւոտ գիշեր մը
- Ինչպէս տերեւներ
- Որդին հօրը բանտապան - 17
- Պուտոնի մաւրեկեալները

Հ. Աթանաս Տիրոյեան.

- Երեմ Գաջերը
- Ապու Գասըմի հողաթափները
- Երկու ծայրայեղները
- Խաղամուրը
- Նեկտարինէ արդարասէր
- Սանդուխտ համբերատար
- Վարդագոյն մամակը
- Գողցուած սագը
- Վիլիելմ կամ քրիստոնէական ներդրամութիւն

Հ. Անանիա Գոնտաճեան.

- Տագնապալի գիշեր մը

Հ. Յակոբ Տիրոյեան.

- Երկու աղանեսակ
- Կեղծ ոստիկանապետը
- Որդիական սէր
- Պանդալեոնի մաշը
- Փոքրիկ ստախօսը

Հ. Թադէոս Թովմանեան.

- Անմեղութեան յարթանակը
- Ջարմայր կամ մոռացկոտ իմաստակը
- Խելքի պակասը քակի վնաս է
- Անիծեալը (Թրգմ.)
- Ջղացաւորութիւն (Թրգմ.)

- Հ. Արսէն Ղազիկեան.
Իդիպոս Թագաւոր (թրգմ.)
- Հ. Սահակ Մովսէսեան.
- Հոպիտները
- Փառքի գաւակներ (թրգմ.).
- Արշակ Երկրորդ
- Աւարայրի դիւցազները
- Հ. Ալեքսիս Յովսէփեան.
- Բարեկենդանի վերջին իրիկունը
- Հ. Վրթանէս Խանպէկեան (1887-1945).
- Անգնդակ ատրնանակներ
- Հ. Կիւրեղ Քիպարեան.
- Ֆրից Հենրի կամ խենքը (թրգմ.)
- Հ. Եղիա Փէշիկեան.
- Փոքրիկ Փարիզեցի (թրգմ.)

Է. ԿՐԹԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

20րդ դարու կրթական շարժումը, հարազատ ցոլացումն է 20րդ դարու Հայ ժողովուրդի ճակատագրին: Բազմաթիւ պատմական դպրոցներ, Միաբանութեան առաքելութեան մաս կազմող, Ցեղասպանութեան պատճառով, կը դադրին գոյութիւն ունենալէ (տե՛ս վերեւ), դաստիարակ վարդապետներ՝ կը սպաննուին կամ կ'աքսորուին, աշակերտութիւնը կը կոտորուի... Եւ գինադադարին, տակաւին վէճքերը չսպիացած, Մխիթարեան Հայրերը, արագօրէն կը կազմակերպուին, նոր վարժարաններ բանալու, այս անգամ Մփիւռքի տարածքին, հոն ուր Մեծ Աղէտը նետած էր կարեւոր գանգուածներ:

Այսպէս, նիւթական մեծ գոհողութիւններով, որբերու հաւաքը ծայր կ'առնէ, նախ Կովկասի մէջ, Հ. Տիմոթէոս Տէր Կիւլեանի ջանքերով: Այդ որբերուն մէջ կը գտնուէին ապագայ մեծ արուեստագէտները անցեալ դարուն. Լեւոն Զաւէն Միրաբէկեան (հեղինակ I ask you ladies and gentlemen) ինքնակենսագրական հատորին, Զարեհ Մուքաֆեան եւ Լեւոն Թիւքիւնեան նկարիչները եւ Արամայիս եւ Ստեփան Սրապեան եղբայրները, Հրաչ Բաջարեանց եւ Միլանոյի հին սերունդի մեծ մասը:

Նոր վարժարանները կը տեղաւորուին նախ Միջին Արեւելքի մէջ (Լիբանան, Սուրիա, Պաղեստին, Եգիպտոս եւ ապա Ֆրանսա, Արժանթին, Միացեալ Նահանգներ):

Սեւան Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ դասագիրքի շարքերուն պատրաստուած (1940ական թուականներուն) հայախօս սերունդին համար, 60ական թուականներուն կը յաջորդեն Սեւան Ընթերցարաններու նոր շարքերը, գլխաւորաբար Արեւմտեան եւ Խաղաղականի փերը հաստատուած գաղութներուն համար, որոնց կը յաջորդեն այդ լեզուներով բառգիրքներու շարքերը, ամէն ճիգով դիւրացնելու համար, հայերէն լեզուի ուսուցումը նոր բայց տկար-հայախօս սերունդներու մօտ:

Հոս հարկ է յիշել ԳՐԱԿԱՆ ՅՈՒՔԵՐՈՒ շարքը, քաղուածքներ արդի հայ գրականութենէն, պատրաստուած դպրոցական բարձրագոյն կարգերու համար, որ սկիզբ առաւ 1944ին եւ այսօր կը հաշուէ 48 հատոր:

Դասագիրքի նպատակներով լոյս տեսան նաեւ Հ. Վահան Յովհաննէսեանի պատրաստութեամբ ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ վեցհատորեայ շարքը, որ ցարդ 20 տպագրութիւն ունեցաւ: Նոյնպէս ԿՐՕՆՔԻ վեց հատորով, դասագիրքերը, յաճախ վերատպուած:

Արդ նկատի առած որ դպրոցական ասպարէզին մէջ, մեծ նուաճումներ գործեցին նաեւ գաղութային կազմակերպութիւններ, Միութիւններ եւ կուսակցական ձգտումով մարմիններ, Մխիթարեան Հայրերուն ներկայիս հիմնական սեւեռակէտը դարձած է ստեղծել ՍՓԻՒՌՔԻ ՀԱՅ ՈՒՍՈՒՅ-ՉԱՆՈՅԸ իր դարաւոր Հաստատութիւններէն մէկուն մէջ, Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան կամ Սելրի Սամուէլ-Մուրատեան վարժարաններու երդիքին ներքեւ:

Այս անհրաժեշտութիւն դարձած էական ծրագիրը, բնականաբար, կը կարօտի գիտակից, կարող եւ առողջ դիտաւորութիւն ունեցող Սփիւռքահայ ուժերու, որովհետեւ միայն Մխիթարեան Հայրերու Երեքհարիւրամեայ փորձառութիւնը միացած Սփիւռքի գիտարուեստական եւ նիւթական աջակցութեան, կրնայ 21րդ դարու առաջին տասնամեակին, իրագործելի դարձնել նման ծրագիր մը, փրկելու համար ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ՎՍԵՄ, ՀԱՐՈՒՍ ԲԱՐԲԱՌԸ, հայ մշակոյթի ամէնէն թանկագին գանձը, արեւելքէն եւ արեւմուտքէն ըսպառնացող այլանդակութիւններէն:

Ը. ՄԻԽԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ – ՄԻԽԹԱՐԵԱՆ ԱՇԽԱՐՀ

1900 թուականին Մխիթարեան Միաբանութիւնը կը բոլորէր իր Հիմնարկութեան երկու հարիւրամեակը: Մխիթար Աբբայի աստղը հետզհետէ աւելի մեծցած եւ պայծառացած էր շնորհիւ իր շարք մը փայլուն աշակերտներուն, որ քիչ մը ամէն մարզի մէջ նոր լոյս սփռած էին Հայ հոգեւոր եւ նիւթական մշակոյթի անդաստանէն ներս: Ինքնաբերաբար սկսած էր ստեղծուիլ գրականութիւն մը՝ Մխիթարի, իր աշակերտներուն եւ գործունէութեան շուրջ: Այդ նիւթն է որ կ'ուզեմ շօշափել այս բաժինին մէջ: Արձագանգ տողող կ'ըլլայ՝

Հ. Բարսեղ Սարգիսեան.

- երկուհարիւրամեայ կրթական գործունէութիւն վեցետկոյ Մխիթարեան Միաբանութեան

- Մխիթարեան Միաբանութեան երկուհարիւրամեայ գրական գործունէութիւնը

Հ. Յովհաննէս Թորոսեան.

- Վարժ Մխիթար Աբբայի Սերաստացոյ

Հ. Գաբրիէլ Նահապետեան.

- վեցետկոյ Մխիթարեան Յանձնաժողովին կարծիքը հայերէն ուղղագրութեան մասին

Հ. Վարդան Հացունի.

- վեցետկոյ Մխիթարեան Յանձնաժողովին կարծիքը հայերէն ուղղագրութեան մասին

Հ. Արսէն Ղազիկեան.

- վեցետկոյ Մխիթարեան Յանձնաժողովին կարծիքը հայերէն ուղղագրութեան մասին

- Մխիթար:

Հ. Միսն Երեմեան.

- Կենսագրութիւն Հ. Ղեւոնդ Ալիշանի

- Մխիթարեան վեհը

Հ. Յովհան Աւգեր.

- Համառօտ վարժ ծառային Աստուծոյ Մխիթարայ

Հ. Սահակ Տէր Մովսէսեան.

- Մուրատ-Ռաֆայէլեան վարժարաններու քարերարները

Հ. Ղեւոնդ Տայեան.

- Համապատկեր 100ամեայ շրջանի Մխիթարեան դաստիարակութեան գործունէութեան

- Մայր դիւան Մխիթարեանց վեցետկոյ

- Մխիթար Արքահայր երաժիշտ

- Յոլի հոգեշունչ (Ալիշանի)

Հ. Մանուէլ Թաշնեան.

- Համառօտ կենսագրութիւն Մխիթար Արքայի

Հ. Վահան Յովհաննէսեան.

- Սեւանէն Ս. Ղազար

- Վանքի ծաղիկներ

Հ. Գրիգոր Սարգիսեան.

- Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեանց ի վեցերորդ

Հ. Մեսրոպ Ճանաչեան.

- Հ. Արսէն Ղազիկեան եւ իր թարգմանութիւնները

- Ս. Ղազար Մխիթարեան Մայրավանք

- Վեցերորդի Մխիթարեան Հայերէն վարժարաններն ու

անոնց հունձքը

- Հ. Եղիա Փէշիկեան եւ իր խօսքը

- Հ. կարապետ Տ. Սահակեանի բանաստեղծութիւնները

Հ. Խորէն Տրիգլեան.

- Յուշամատեն Սամուէլ-Մուրատեան վարժարանի

- Մխիթար Սեբաստացի

Հ. Աւետիք Թալաթիսեան.

- Մխիթար Սեբաստացի

Հ. Եփրեմ Տէր Ղազարեան.

- Յուշամատեն 50ամեայ Հալէպի Մխիթարեան վար-

ժարանին

Հ. Ղուկաս Ֆոկոլեան (1927-1999).

- La vita e le opere del Servo di Dio Abate Mechitar

Հ. Յարութիւն Պզտիկեան.

- Մխիթար Սեբաստացի եւ Մխիթարեաններու նպաստը

Հայ մշակոյթին

- Ս. Ղազար (1986)

Հ. Սահակ Ճեմնեան.

- Հ. Ղեւոնդ Ալիշան Տեսուչ Փարիզի Մուրատեան վար-

ժարանի

- Հ. Ներսէս Սարգիսեանի ուղեւորութիւնը դէպի Փոքր

եւ Մեծ Հայք (1843-1853)

- Մխիթար Արքաօր հրատարակչական առաքելութիւնը

- Հայ քարտիսագրութեան դպրոց մը Ս. Ղազարի մէջ

- Հ. Միքայէլ Զամչեան եւ իր հայոց պատմութիւնը

- Մայր ցուցակ ձեռագրաց հտ. Դ,Ե,Զ,Է,Ը

Հ. Լեւոն Զեֆեան.

- Մխիթար Լուսանորոգ եւ ուսուցիչ

Հ. Տանատ Նարտըմեան.

- Մխիթարեաններու նպաստը հայ մշակոյթին եւ հայագիտութեան

- Ս. Ղազար կղզին մայրավանք Մխիթարեաններու

- Վեներտիկի Մխիթարեաններու հայկական կամուրջ

- S. Lazzaro the monastic headquarters of the Mekhitarian

order

- The contribution of the Mekhitarians to the armenian culture and armenology

Գեղունի. - Մխիթար, բացառիկ թիւ, Բ դարադարձ 1949

Գեղունի. - Բացառիկ թիւ նուիրուած ԲԱԶՄԱՎԷՊի 100ամեակին (1947)

Բազմավեպի բացառիկ թիւեր.

- 1949, թ. 7-12 Երանաշնորհ Մխիթար Արքաօր մահուան երկրորդ դարադարձին

- 1960, թ. 9-10 Գերպ. Սրապիոն Ուլուհոնեանի արքայութեան 25ամեակին եւ արքեպիսկոպոսական ձեռնադրութեան

- 1961, թ. 11-12 Հ. Ղեւոնդ Ալիշանի մահուան 60ամեակին

- 1968, թ. 7-12 Մխիթար արքայի եւ Մխիթարեան Միաբանութեան Ս. Ղազար մտնելու 150ամեակին

- 1970, թ. 11-12 Հ. Ղեւոնդ Ալիշանի ծննդեան 150ամեակին

- 1976, թ. 1-4 Երանաշնորհ Մխիթար Արքաօր ծննդեան 300ամեակին

Armeniaca.

- Հայագիտական բարձրորակ, մեծածաւալ հրատարակութիւն մը մասնակցութեամբ հայ եւ օտար ուսումնասէրներու

- Les armenistes et les Mekhitaristes (Հ. Մեսրոպ Ճանաշեան)

- Ս. Ղազարի հայկական ակադեմիայի ամբողջ հայագիտական վաստակը Մխիթար Արքայի օրերէն սկսած

Թ. ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Եթէ նախորդ երկու դարերու ընթացքին, Մխիթարեան հրատարակչատունը ստեղծեց իր սեփական ՔԱՐՏԻՍԱԳՐՈՒ-

ԹԵԱՆ ԴՊՐՈՑԸ եւ տուաւ գլուխ-գործոցներ հայ քարտիսագրութեան պատմութեան, Գասներորդ դարը կը յատկանշուի Գեղարուեստական ամենաբարձր որակի հրատարակութիւններով, որոնք փառքի էլը կրնան կազմել հայ Տպագրութեան Պատմութեան:

Ոսոքս, ի հարկէ, կը վերաբերի **ԳԵՂՈՒՆԻՆԵՐՈՒՆ**, որոնց առաջին թիւը՝ լոյս կը տեսնէ դարուն սկիզբը, 1901 թուին, եւ վերջինը, ամբողջութեամբ նուիրուած Մխիթար Աբբահօր մահուան երկրորդ դարադարձին (1749-1949): Հոն մոգական ուժով մը խմբուած են անցնող դարու մեծագոյն հայ ղէմքերը (Արշակ Չօպանեան, Գուրգէն Մխիթարեան, Շաւարշ Նարդունի, Կոստան Չարեան, Չաւէն Միւրմէլեան, Ուիլեամ Մարոյեան, Անդրանիկ Ծառուկեան, Հրաչ Քաջարեանց, Մարի Աթմաճեան, Արամայիս Սրապեան, Մհնչեղ Իշխան, Արսէն Երկաթ, Նշան Պէշիկեթաշլեան, Չարեհ Մութաֆեան, Յարութիւն Քիւրտեան, Չատիկ Սանգատեան, Արամ Երեմեան, Սարգիս Ճեփահիրճեան, Քիպարեան, Տայեան, Յովհաննէսեան, Փէշիկեան, Ֆերահեան, Ճանաչեան եւ Տէր Ղազարեան):

Հանճարեղ թիւ մըն է 1927 Գեղունին, ուր լայն տեղ գտած են 20րդ դարու, մեծագոյն հայ արուեստագէտները, բազմաթիւ գունաւոր վերարտադրութիւններով:

Նոյնքան շքեղ է 1947ի բացառիկը, նուիրուած ԲԱՁ-ՄԱՎԷՊԻ 100ամեակին (1843-1943) որ լի է Ս. Ղազարի ձեռագրային գանձերու եւ Ս. Ղազարի թանգարանի նկարներու գունաւոր վերարտադրութիւններով:

Ասոնց կողքին անհրաժեշտ է յիշել ՄԱՆՐԱՆԿԱՐ-ՉՈՒԹԵԱՆ նուիրուած հատորները, քաղուած Ս. Ղազարի ձեռագրատան հարուստ պաշարէն, որոնցմէ առաջին, մեծադիր, լոյս տեսաւ 1966-67 տարիներուն, երկրորդ հատորը, նոյնպէս մեծադիր, տպագրուեցաւ 1989ին, սակայն կազմուած լոյս տեսաւ միայն անցնող Սեպտեմբերին, հուսկ միջանկեալ, լոյս տեսաւ փոքր չափերով քառալեզուեան հրատարակութիւն մը եղաւ, ամփոփելով քաղուածաբար լաւագոյն մանրանկարները:

Մրագրուած Երրորդ եւ վերջին հատորը, մեծադիր, պատրաստութեան ընթացքի մէջ է եւ փութով կրնայ հրապարակ իջնել, խնամուած տպագրութեամբ:

Գեղարուեստական հրատարակութիւններու շարքին պէտք է դասել Բազմապէշպի 14 բացառիկ թիւերն ալ (2942 էջերէ բաղկացած) նուիրուած ազգային եւ միջազգային կարեւոր յիշատակներու, զեղարուեստական, գրական, բանասիրական, պատմական ու կրօնական հարուստ բովանդակութեամբ:

Բազմալեզ - Մատենաշարի 38 հատորներուն մէջ, ընդ-գրկուած են նաեւ մշակութային եւ գեղարուեստական նիւթեր:

Գեղարուեստի նուիրուած հրատարակութիւններ են.

Հ. Գաբրիէլ Նահապետեանի - Բրիստոնէական Ճարտարապետութիւնը

Հ. Վարդան Հացումիի - Այվազեան Յովհաննէս Ծովանկարիչը եւ կենսագրութիւն եւ Բերքուածք Պետրոս Աղամեամի

Հ. Միսնն Երեմեանի - Գեղեցիկը - Կոստանդնուպոլիսը - Պատկերներ - Վեհը

Հ. Սուքիաս Էփրիկեանի - Արեւելք քարտէսը - Էջմիածինը - Բնաշխարհիկ քառարանը

Հ. Մկրտիչ Պատուրեանի - Ջարդանկարք Աւետարանին Մլքէթագուհոյ

Հ. Յարութիւն Պոտիկեանի - Հայկական հին եկեղեցիները

Հ. Սահակ Ճեմնեմեանի - Յովհաննէս Պատկերահան եւ իր նամականիւն

Հ. Տաճատ Ծարտըմեանի - Աստուած եւ Ժամանակակից գրականութիւն - Որդան կարմիր եւն.

Գեղարուեստական գրականութեան կոթողներէն մին կարելի է համարիլ Հայ սրբազան երգիին նուիրուած Գլուխգործոց աշխատասիրութիւնը մեծ երաժշտագէտ Հ. Ղեւոնդ Տայեանի (1884-1968) 7 ստուար հատորներով լոյս տեսած (չուրջ 3.000 էջերէ բաղկացած) 1950-70 տարիներուն, Ս. Ղազարեան աւանդութեամբ երգուած շարականները:

Շուրջ երեսուն բանաստեղծական եւ գրական բովանդակութեամբ հատորներ լոյս տեսած են Հ. Վ. Յովհաննէսեանի, Հ. Մ. Ճանաչեանի, Հ. Մ. Յովհաննէսեանի, Հ. Ե. Տէր Ղազարեանի, Հ. Կ. Տէր Սահակեանի, Հ. Ե. Փէչիկեանի, Հ. Տ. Եարտըմեանի ստորագրութիւնները կրող:

Այսօր արդէն թեւակոխած ենք նոր հազարամեակ. Մխիթարեան Միաբանութեան պատմութեան մէջ տեղի ունեցած ամէնէն ուրախալի եղելութիւնը Վիեննայի Միաբանութեան վերադարձը դէպի ՄԱՅՐ ՏՈՒՆ, իր երիտասարդ կարող ուժերով, մշակութային եւ առաքելական հարուստ պաշարով, Մխիթար Սեբաստացիին 300 տարի առաջ հիմնած Միաբանութիւնը, Հայոց Պատմութեան մէջ, եւ ոչ միայն Հայոց, անկրկնելի այս երեւոյթը, դարձած է ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐ ԵՒ ՆԻԻԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ փարոս, արժէքներու կայսրութիւն

մը, անսպառ կարելիութիւններով օժտուած, որուն հարկ է որ լրջօրէն եւ մեծ գիտակցութեամբ մօտենայ օրէ օր աճող ՀԱՅ ՍՓԻԻՌԻԸ, քանի ան հիմնուած չէ մի քանի տասնեակ վանականներու հոգեւոր եւ իմացական փափաքներուն գոհացում տալու, այլ համաձայն ՄԵԾ ՍԵԲԱՍՏԱՅԻԻ կտակին

--ՍԿԻԶԲԷՆ Ի ՎԵՐ, ԻՆԶՊԷՍ ԵՍ, ԱՅՍ ՄԻԱԲԱՆՈՒԹԻԻՆՆ ԱԼ ՍԱՀՄԱՆՈՒԱԾ Է ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌՔԻՆ--

Հ. ՅԱՐՈՒԹԻԻՆ Ծ. ՎՐԴ. ՊԶՏԻԿԵԱՆ